**Հավելված №1**
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2021
թվականի փետրվարի ---ի №---Ա որոշման

# ԾՐԱԳԻՐ

# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ (ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐԻ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՈՒԴԻՏԻ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) հանդիսանում է էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխող և երաշխավորված մատակարար: Բաշխման ցանցի (էլեկտրական էներգիայի բաշխման գծերի, ենթակայանների և այլ սարքավորումների միասնական համակարգ, որի միջոցով էլեկտրական էներգիան բաշխվում է սպառողին) սեփականատերն է: Ընկերությունն իր գործունեությունը ծավալում է «Էներգետիկայի մասին» օրենքի, այլ օրենքների, լիցենզիաների, ցանցային կանոնների, առևտրային կանոնների, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից ընդունված և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:
2. Հանձնաժողովն իրականացնում է էներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող կարճաժամկետ և երկարաժամկետ ներդրումային ծրագրերի ուսումնասիրություն և համաձայնեցում, ընկերությունների ներդրումային գործունեության վերլուծություն: Նշված աշխատանքների իրականացումը կարևորվում է սակագներում ներառման ենթակա ներդրումների օգտակար և օգտագործվող ծավալի որոշման, ներդրումների արդյունավետության գնահատման, այդ համատեքստում անարդյունավետ և ոչ հիմնավոր ներդրումների ծավալի բացահայտման և վերհանման առումով՝ սպառողներին առաքվող էլեկտրական էներգիայի սակագնային մարժայում դրանք չներառելու սկզբունքից ելնելով:
3. Ընկերությունը ներկայումս իրականացնում է 2018-2027 թվականների շուրջ 314,8 մլրդ դրամի ներդրումային ծրագիր: Մասնավորապես, 2020 թվականին ընկերությունն իրականացրել է շուրջ 36,3 մլրդ դրամի ներդրումներ (շուրջ 70 հազ կարգագիր), իրականացրել է շուրջ 41 գնման գործարք՝ շուրջ 27,8 մլրդ դրամ ծավալով:
4. Սույն ծրագրի շրջանակում տեխնիկական աուդիտ հասկացությունը ենթադրում է Հանձնաժողովի կողմից առաջադրված ծրագրով և ժամկետներում դիտարկման իրականացում (այսուհետ՝ Աուդիտ), որը բխում է Ընկերությանը տրված էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիայի պայմանների 43-րդ կետից:

## 2. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

5. Աուդիտի նպատակն է սակագնային մարժայում ներդրումների (լրիվ կամ մասնակի) ներառման կամ մերժման նպատակով ստանալ անկախ մասնագիտական կազմակերպության օբյեկտիվ և հիմնավոր գնահատականները Ընկերության կողմից 2020 թվականին իրականացված ներդրումային ծրագրերի և դրանց շրջանակում կատարված գնումների վերաբերյալ, որոնք կտրվեն ներդրումների հավաստիության և հիմնավորվածության ստուգման առավել թիրախային մեթոդների և գործիքների կիրառմամբ:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

6. **Սույն ծրագրի շրջանակում պետք է իրականացվեն հետևյալ աշխատանքները.**
   1) **Ներդրումային հաշվետվությունում ներկայացված շինմոնտաժային աշխատանքների արժեքների ուսումնասիրություն:** Գնահատվում է ներդրումային հաշվետվությունում ներկայացված շինմոնտաժային աշխատանքների արժեքի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի №879-Ն որոշմամբ հաստատված գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգին՝ հաշվի առնելով Հանձնաժողովի գրությամբ համաձայնեցված համապատասխան տոկոսադրույքները: Փաստացի և քաղաքաշինական նորմերով հաշվարկվող արժեքների շեղումների առկայության պարագայում գնահատվում է շեղման չափը՝ տոկոսային և բացարձակ մեծություններով: Համադրելի աշխատանքների շուկայի առկայության դեպքում գնահատվում է նաև շինմոնտաժային աշխատանքների համապատասխանությունը շուկայական արժեքներին: Ընդ որում, ընտրանքային ուսումնասիրության ժամանակ պետք է ներառել ավելի մեծ արժեքով աշխատանքներ իրականացրած առնվազն առաջին 5 կապալառուների, ինչպես նաև Ընկերության կողմից սեփական ուժերով իրականացված աշխատանքները:
   2) **Ներդրումների իրականացման համար օգտագործված նյութերի և սարքավորումների (հաշվետվությունում առկա բոլոր տիպերը, իսկ մակնիշի միավորի գինը** 100 000 **դրամը գերազանցելու դեպքում՝ նաև այդ մակնիշները**), **շուկայական արժեքների գնահատում և հաշվետվությունում ներկայացված համապատասխան գների և արժեքների հետ համեմատում**: Շեղումների առկայության պարագայում գնահատվում է շուկայական արժեքից շեղման չափը՝ տոկոսային և բացարձակ մեծություններով:
   3) **Իրականացված աշխատանքների նախագծա-նախահաշվային**, **կատարողական և սկզբնական հաշվապահական փաստաթղթերի** (**շուրջ** 70 **հազ կարգագիր՝ շուրջ** 36,3 **մլրդ դրամ ծավալով**) **և Հանձնաժողով ներկայացվող համապատասխան հաշվետվությունների գնահատում և համեմատական ուսումնասիրություն**, որի ընթացքում, ի թիվս այլնի, ստուգվում է իրականացված աշխատանքների՝
   ա. համապատասխանությունը գործող քաղաքաշինական նորմերին և կանոններին,
   բ. համապատասխանությունը նախագծա-նախահաշվային փաստաթղթերին:
   Ընդ որում, շեղում չի համարվում՝

- օրենսդրության պահանջների համապատասխան՝ օբյեկտը ոչ էական շեղումներով կառուցված լինելը, պայմանով, որ դա չի հանգեցրել անվտանգության պահանջների խախտմանը, անվտանգության մակարդակի նվազեցմանը, պահանջվող տեխնիկական պարամետրերի խախտմանը և գրավոր համաձայնեցվել է Ընկերության տեխնիկական տնօրենի հետ,
- Ապրանքա նյութական արժեքների փաստացի ձեռքբերված և հաշվային փաստաթղթերում նվազեցված ձեռքբերման գների տարբերությունը,
- նախագծման և փաստացի կատարման (ակտավորման) ժամկետներում ՀՀ ֆինանսների նախարարության կայքում հրապարակվող՝ շինարարական նյութերի, կոնստրուկցիաների և պատրաստվածքների կողմնորոշիչ գների ցանկերում կատարված փոփոխությունների կիրառման արդյունքում տարբերություններ, եթե այդ տարբերությունը 10 տոկոսից ավելի չէ:

գ. համապատասխանությունը կատարողական ակտերին,

դ. Կանխատեսվող (պայմանագրերով սահմանված) արժեքների և ծավալների փոփոխությունը,

ե. շինարարական աշխատանքների ընթացքում օգտագործված շինվածքների, կոնստրուկցիաների որակը հաստատող սերտիֆիկատների, տեխնիկական անձնագրերի և լաբորատոր փորձարկումների և անալիզների արդյունքների գոյությունը և նախագծի ու արտադրանքի որակի պահանջներին համապատասխանությունը,

զ. տարբեր արժեքներով աշխատանքների ընտրանքային ուսումնասիրություն տեղում և ստուգիչ չափումների իրականացում:

4) **Օգտագործված նյութերի և տեղակայված սարքավորումների (հաշվետվությունում առկա բոլոր տիպերը և մակնիշները), որակի և ծագման աղբյուրների ստուգում, մասնավորապես՝**

ա. օրենքով կամ այլ իրավական ակտով նման պահանջի առկայության դեպքում նյութերի և ինժեներական սարքավորումների որակը հաստատող սերտիֆիկատների, տեխնիկական անձնագրերի և լաբորատոր փորձարկումների և անալիզների արդյունքների գոյության և նախագծի ու արտադրանքի որակի պահանջներին համապատասխանության ստուգում,

բ. շինարարական աշխատանքների ընթացքում օգտագործված նյութերի և տեղակայված սարքավորումների ծագման աղբյուրների ստուգում, նախկինում շահագործված նյութերի և սարքավորումների կրկնակի շահագործման փաստի բացահայտման նպատակով:

5) **«Էլեկտրական էներգիայի հաշվառման և հսկման ավտոմատացված համակարգի ներդրում» ծրագրով իրականացված աշխատանքների և դրանց շահագործման հանձնման փաստի վերաբերյալ վերլուծություն և գնահատում:**

6) 2020 **թվականի շուրջ** 27,8 **մլրդ դրամ ծավալով շուրջ** 41 **գնման գործընթացի աուդիտ և մասնակցություն ընկերության կողմից ընթացիկ տարում ձեռքբերվող բոլոր ապրանքանյութական արժեքների շուկայական գների շուկաների ուսումնասիրմանը, մասնավորապես՝**

ա. գնման գործընթացի համապատասխանությունը գործող կարգավորումներին,

բ. գնման առարկայի մատակարարման փաստի հավաստիության գնահատում,

գ. մատակարարման փաստացի ժամկետների համապատասխանությունը կանխատեսվող (պայմանագրերով սահմանված) ժամկետներին,

դ. գնման առարկայի կանխատեսվող (պայմանագրերով սահմանված) արժեքների և ծավալների փոփոխությունը,

ե. գնման առարկայի շուկայական արժեքի որոշում, շուկայական արժեքը գերազանցող գնումների հստակ ծավալի որոշում՝ սակագնում գերվճարված գումարներ չներառելու նպատակով,

զ. գնումների գործընթացում «ռիսկային սեգմենտների» հայտնաբերում՝ ուշացած առաջարկներ, մրցույթի ժամկետների ոչ հիմնավոր երկարաձգում, գնման առարկային ոչ համապատասխան վճարման ժամկետների սահմանում, մատակարարների նկատմամբ ներկայացվող խտրական պահանջների առկայություն, մրցույթի մասնակիցների կողմից ներկայացրած փաստաթղթերի խեղաթյուրում և այլն,

է. մասնակցություն ընկերության կողմից ընթացիկ տարում ձեռքբերվող բոլոր ապրանքանյութական արժեքների շուկայական գների և հնարավոր նոր շուկաների ուսումնասիրմանը:

7) **Բիզնես գործընթացների վերլուծություն (ընկերության ներքին ընթացակարգերի և հսկողական մեխանիզմների վերլուծություն, թերությունների վերհանում), անհրաժեշտության դեպքում Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերում փոփոխություններ կատարելու առաջարկներ ներկայացնելու նպատակով:**

8) **Նախորդ տարիներին իրականացված տեխնիկական աուդիտների ընթացքում արձանագրված թերությունների վերացմանն ուղղված աշխատանքների ուսումնասիրություն և դրանց վերաբերյալ եզրակացությունների ներկայացում**:

7. Աուդիտի ընթացքում իրականացվում է վերոնշյալ ծավալների ամբողջական կամ ընտրանքային ուսումնասիրություն՝ ապահովելով այնպիսի ընտրանք, որի արդյունքները կիրառելի (ներկայացուցչական) կլինեն նմանատիպ աշխատանքների ամբողջական ծավալի նկատմամբ, որը կապահովի Ընկերության ներդրումային գործունեության ամբողջական գնահատումը:

8. Աուդիտի իրականացման նպատակով Ընկերությունը Աուդիտ իրականացնող անձին տրամադրում է 2020 թվականի ներդրումային գործունեության վերաբերյալ հանձնաժողով ներկայացվող հաշվետվությունը, դրանում ներկայացված և ներդրումներում օգտագործված սարքավորումների և նյութերի ցանկը՝ կարգագրերի կտրվածքով, համաձայն՝ հավելվածի:

9. Աուդիտի ընթացքում հաշվի են առնվում Ընկերության համար հասանելի շուկաները, տեղափոխման ծախսերը և թույլատրելի շահույթի նորման: Այն դեպքերում, երբ սարքավորումը ձեռք է բերված տեղակայման ծախսերի հետ, անհրաժեշտ է գնահատել նաև տեղակայման ծախսերը:

10. Ընկերությունը կարող է Աուդիտ իրականացնող անձին ներկայացնել նաև այլ հարակից ծառայություններ, լրացուցիչ վճարի դիմաց, որը ենթակա չէ սակագնով փոխհատուցման:

## 4. ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

11. **Աուդիտ իրականացնող անձը կարող է հանդիսանալ ընկերություն կամ ընկերությունների միավորում /կոնսորցիում/ և պետք է՝**
   1) լինի միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական-խորհրդատվական ընկերությունների ցանցի անդամ,
   2) ունենա նախորդող 5 տարիների ընթացքում էներգետիկայի բնագավառի, որը ներառում է էլեկտրաէներգետիկական, ջերմամատակարարման, գազամատակարարման համակարգերը, ջրային ոլորտի, հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառի, փոստային կապի բնագավառի, երկաթուղային տրանսպորտի բնագավառի ընկերություններում, որից առնվազն 1-ը առնվազն 500 աշխատակից ունեցող, սույն ծրագրի 3-րդ բաժնում նշված ծառայությունների մատուցման փորձ,
   3) ունենա վերջին երեք տարվա ընթացքում տարեկան առնվազն 200 մլն դրամի շրջանառություն,
   4) չհանդիսանա Ընկերության ղեկավար կազմի կամ սեփականատիրոջ կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս նշված անձին (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպություն:

12. **Աուդիտ իրականացնող անձի փորձագետների թիմի կազմում պետք է ներառված լինեն ստորև նշված պահանջներին բավարարող աշխատանքային թիմի ղեկավար և առնվազն 5 հիմնական անդամներ, որոնք չեն կարող փոխարինվել Աուդիտի ընթացքում առանց Հանձնաժողովի համաձայնության**.
   1) գնումների կազմակերպման մասնագետ կամ շուկայագետ՝ առնվազն 5 տարվա համապատասխան մասնագիտական փորձառությամբ կամ լիազոր մարմնի կողմից տրված գնումների համակարգողի որակավորմամբ,
   2) նախագծման և (կամ) շինարարական աշխատանքների իրականացման մասնագետներ՝ 5 տարվա աշխատանքային փորձառությամբ,
   3) նախագծման, գնումների և ճարտարագիտական վերահսկողության առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ:

## 5. ԱՈՒԴԻՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

13. **Հայտը ներկայացնելու պահանջները**.
   1) Հայտը (առաջարկը) պետք է ներառի առնվազն հետևյալ տեղեկատվությունը.

      ա. ծրագրի ներքո մեթոդոլոգիայի, աշխատանքների և գործողությունների հաջորդականության մանրամասն նկարագրություն,

      բ. սույն ծրագրի 12-րդ կետում նշված մասնագետների և նրանց ներգրավվածության վերաբերյալ:

14. **Ժամկետները**

1) Հայտերը (առաջարկները)՝ բացառությամբ գնային առաջարկի, պետք է առաքվեն նաև Հանձնաժողով՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Սարյան 22, 0002 հասցեով:
2) Աուդիտորը նախնական հաշվետվությունը պետք է Հանձնաժողով ներկայացնի մինչև 2021 թվականի սեպտեմբերի 1-ը:
3) Աուդիտը պետք է ավարտվի և վերջնական հաշվետվություն ներկայացվի Հանձնաժողով մինչև 2021 թվականի սեպտեմբերի 30-ը:

15. **Վճարման պայմանները**

1) Աուդիտ իրականացնող անձի ծառայությունների համար Ընկերության կողմից 20% կանխավճարը վճարվում է Հանձնաժողովի հանձնարարականի հիման վրա՝ Աուդիտ իրականացնող անձի կողմից աշխատանքների պլանի Հանձնաժողով ներկայացնելուց և Հանձնաժողովի ընդունելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:
2) Աուդիտորական ծառայությունների համար Ընկերության կողմից աուդիտ իրականացնող անձի ծառայությունների վճարի մնացած 80% վճարումն իրականացվում է Ընկերությանը Հանձնաժողովի հանձնարարականի հիման վրա՝ վերջնական հաշվետվությունը Հանձնաժողով ներկայացնելուց և Հանձնաժողովի ընդունելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:
3) Սույն կետի պահանջները չեն վերաբերում սույն Ծրագրի 10-րդ կետով սահմանված դեպքերին:

16. **Այլ պայմաններ**

1) Հանձնաժողովը, Աուդիտ իրականացնող անձը և Ընկերությունը առնվազն մեկ աշխատանքային օր առաջ տեղեկացվում են Աուդիտի շրջանակում քննարկումներ և հանդիպումներ իրականացնելու (կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ) անհրաժեշտության վերաբերյալ՝ ապահովելով բոլոր կողմերի մասնակցության հնարավորությունը:
2) Աուդիտի ընթացքում Աուդիտ իրականացնող անձը համագործակցում է Հանձնաժողովի և Ընկերության հետ:
3) Աուդիտի արդյունքները ընդունում են Հանձնաժողովը և Ընկերությունը:
4) Աուդիտի աշխատանքային լեզուն հայերենն է:

## 6. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

17. **Աուդիտ իրականացնող անձը Հանձնաժողովին է տրամադրում հաշվետվություն, որում, ի թիվս այլնի, նշվում է (են)**.

1) դիտարկված աշխատանքների ցանկն ըստ գույքահամարների և հասցեների,

2) իրականացված աշխատանքների արժեքների շեղման ծավալը քաղաքաշինական նորմերով և Հանձնաժողովի կողմից համաձայնեցված մեխանիզմներով սահմանված եղանակով հաշվարկված արժեքներից և շուկայական արժեքներից՝ տոկոսային և բացարձակ մեծություններով, ինչպես նաև դրանց կիրառման արդյունքում իրականացված ներդրումներից նվազեցվող ծավալը,
3) ուսումնասիրված սարքավորումների և նյութերի ցանկը՝ ներառելով ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված գները, սույն ծրագրի հավելվածին համապատասխան,
4) հաշվետվությունում ներկայացված սարքավորումների և նյութերի արժեքների շեղման ծավալը ձեռքբերման պահին ձևավորված շուկայական արժեքներից՝ տոկոսային և բացարձակ մեծություններով, ինչպես նաև դրանց կիրառման արդյունքում իրականացված ներդրումներից նվազեցվող ծավալը,
5) սույն ծրագրի 6-րդ կետի 2-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերում նշված աշխատանքների արդյունքում բացահայտված անհամապատասխանությունները կամ շեղումները, դրանց մանրամասն նկարագիրը, ինչպես նաև այն ապրանքանյութական արժեքների ցանկը, որոնց շուկայական արժեքները ուսումնասիրության արդյունքում դիտարկվել են որպես ոչ հավաստի,
6) աուդիտ իրականացնող անձի կողմից Ընկերության պատվերով կատարված ուսումնասիրությունների արդյունքները:

18. Աուդիտի արդյունքները ձևակերպվում են ակտերով, արձանագրություններով, ուրվագծերով, գծագրերով, լուսանկարներով, տեսաֆիլմերով, որոնք կցվում են հաշվետվությանը:

**Հավելված**
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2021
թվականի փետրվարի ---ի №-----Ա որոշման №1
հավելվածի

## Տեղեկատվություն սարքավորումների և նյութերի արժեքների վերաբերյալ

| Գործարանային վերլուծության (նմուշառման) արդյունքում | Սարքավորման անվանումը | Սարքավորման տիպը | Գործարանային համարը | Արտադրման տարեթիվը | Շահագործման միավորը | Սարքավորման գնահատված արժեքը (Արտադրող ընկերության կողմից "-"-ի դեպքում նշվում է գնահատված արժեքը) | Սարքավորման վիճակը | «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից հաշվետվությամբ ներկայացված արժեքը | | Աուդիտի արդյունքում գնահատված արժեքը | | | | | | | Աուդիտի արդյունքում գնահատված և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից հաշվետվությամբ ներկայացված արժեքների շեղման չափը | | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | Սարքավորման վերականգնման արժեքը, դրամներով | Ներդրումային արժեքը | Սարքավորման գնահատված արժեքը | Գնահատման ենթակա սարքավորման արժեքը | Գնահատման արժեքը հաշվարկված ՀՀ դրամ՝ առանց ԱՍՀ | Տեղափոխման արժեքը | Այլ ծախսեր | Տեղադրման արժեքը | Գնահատման արդյունքում | Բացարձակ արժեքով | Տոկոսային արտահայտությամբ | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 |
| | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | |

**Հավելված №2**
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող
հանձնաժողովի 2021 թվականի փետրվարի -
--ի №---Ա որոշման

## «ՀԱՅՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ (ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐԻ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՈՒԴԻՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| № | Աշխատանքների անվանումը | Աշխատանքների ավարտը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1 | «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից բաց մրցույթի հայտարարում | 12.02.2021 |
| 2 | «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից բաց մրցույթի անցկացում | 05.03.2021 |
| 3 | «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից մրցույթում հաղթողի հետ պայմանագրի կնքում | 12.03.2021 |
| 4 | Աուդիտորի կողմից աշխատանքների պլանի ներկայացում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով | 26.03.2021 |
| 5 | Աուդիտորի կողմից նախնական հաշվետվության ներկայացում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով | 01.09.2021 |
| 6 | Աուդիտորի կողմից աշխատանքների ավարտ և վերջնական հաշվետվության ներկայացում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով | 30.09.2021 |